«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 339-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«_____» _____-ի 2019 թվականի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 339-Ն **ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ** ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության2016 թվականի մարտի 31-ի «**Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցչի կարգավիճակն ու գործունեության կարգը հաստատելու մասին»** N 339-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցչի պահպանման և ծառայության հետ կապված ծախսերի փոխհատուցումը, բացառությամբ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարձատրության (հիմնական և լրացուցիչ աշխատավարձ,

պարգևատրում, դրամական օգնություն), կատարվում է «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացվող լրացուցիչ միջոցների հաշվին:».

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1. Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցչի սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները և առանձնահատկությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Պ**ետական կենսաթոշակների մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքներով:»:

2. 2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ըստ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հայտի, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցչի Ռուսաստանի Դաշնությունում պահպանման և ծառայության հետ կապված ծախսերը ընդգրկել 2020 թվականի, այնուհետև՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Փրկարար ծառայության համար նախատեսված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածում:
3. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համատեղ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում անհրաժեշտ վերաբաշխումների վերաբերյալ՝ ելնելով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Փրկարար ծառայության համար նախատեսված հատկացումների վերահաշվարկից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

2019 թվական _____ ___

ք. Երևան